ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՎԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, գ. Արտավազ
1փող. թիվ 44
E-mail artawaz@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ
թիվ 18
22 մայիսի 2017թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՎԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ, ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանգրի 1.17-րդ կետի <<բ>> ենթակետի դրույթների, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2017 թվականի մայիսի 17-ի N01/18.1/2963-17 հանձնարարականը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2017 թվականի մայիսի 27-ին Արտավազ համայնքի տարածքում կազմակերպել և իրականացնել սանիտարական մաքրման, աղբահեռացման, կանաչապատման, բարեկարգման աշխատանքներ և միջոցառումներ:
2. Սանիտարական մաքրման միջոցառումներ անցկացնելու աշխատանքները համակարգելու, վերահսկելու և արդյունքները ամփոփելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝
   1) Հ. Հակոբյան – հանձնաժողովի նախագահ, Արտավազ համայնքի ղեկավարի տեղակալ
   2) Բ. Զորանյան – հանձնաժողովի անդամ, Արտավազի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ
   3) Ս. Չիդիլյան – հանձնաժողովի անդամ, Արտավազի համայնքապետարանի աշխատակազմի գլխ. մասնագետ – գլխ. հաշվապահ
   4) Գ. Հովհաննիսյան - հանձնաժողովի անդամ, Արտավազի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ - գանձապահ
   5) Գ. Զորանյան – հանձնաժողովի անդամ, Փյունիկ գյուղի ակումբի պահակ
3. Համայնքի տարածքում հիմնարկների, ընկերությունների և այլ կազմակերպությունների ղեկավարներին՝ սանիտարական միջոցառումների ընթացքում մաքրել, բարեկարգել, կանաչապատել իրենց կազմակերպությունների տարածքները և շրջակայքը:
4. Համայնքի ղեկավարի տեղակալ Հ. Հակոբյանին՝ սանիտարական մաքրման աշխատանքների ընթացքի պատմամբ սահմանել վերահսկողություն և կատարած աշխատանքների մասին տեղեկատվություն ներկայացնել մարզպետարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ռ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՎԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, գ. Արտավազ
Ւփոող. թիվ 44
E-mail artawaz@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ
թիվ 19
22 մայիսի 2017թ.

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 48-րդ կետի պահանջները *ՈՐՈՇՈՒՄ ԵՄ*

Քաղաքացի Սերգեյ Պողոսյանին Կոտայքի մարզի Հանքավան գյուղում սեփականության իրավունքով պատկանող (սեփականության վկայական Ա - N007828 տրված 02 ապրիլի 1996թ.) 71.07 քառ. մ. մակերեսով բնակելի տանը տրամադրվում է հասցե՝ Կոտայքի մարզ, Արտավազ համայնք, գ. Արտավազ 4 շենք, բնակարան 5 :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ